ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՍՊԻՏԱԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն, Լոռու մարզ, Սպիտակի համայնքապետարան, Շահումյան 7, 1804,
Հեռ: (0-255) 2-25-00, Ֆաքս: (0-255) 2-25-97, էլ. փոստ: municipalityspitak@gmail.com

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 3

ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Կայացավ 20 փետրվարի 2024թ. ժամը 15:00 **ք. Սպիտակ**

Նիստին ներկա էին համայնքի ավագանու 27 անդամներից 16-ը՝ Քաջայր Նիկողոսյանը, Արտակ Մաթոսյանը, Լուսինե Ավետիսյանը, Հայկ Սիսակյանը, Ալվարդ Համբարյանը, Ռաֆայել Սիմոնյանը, Գևորգ Մարգարյանը, Վաչիկ Գրիգորյանը, Զալիկո Համբարյանը, Սամվել Սիմոնյանը, Կարեն Սարգսյանը, Նունե Էհտիբարյանը, Վարդուհի Թումանյանը, Սարգիս Փիլոյանը, Վահե Ղազարյանը, Աննա Ալթունյանը:

Նիստից բացակայում էին համայնքի ավագանու 11 անդամներ՝ Կարինե Դիլաքյանը, Արամայիս Փիլոյանը, Վարազդատ Մխիթարյանը, Համլետ Մազմանյանը, Գագիկ Սահակյանը, Նարինե Հակոբյանը, Արկադի Ասատրյանը, Կարեն Գասոյանը, Մանուշ Աթյանը, Գուրգեն Փիլոյանը, Սասուն Ասատրյանը /պատճառները նշված են համայնքի ավագանու անդամների գրանցման թերթիկում/:

Նիստին մասնակցում էին համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Ազգանուշ Ֆրանգյանը, աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, գնումների, գովազդի, առևտրի և սպասարկման բաժնի պետ Վարուժան Ապրեսյանը, աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության, կոմունալ սպասարկման և տրանսպորտի բաժնի պետ Երեմ Գրիգորյանը, աշխատակազմի քարտուղարության, անձնակազմի կառավարման և տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Թագուհի Շուշանյանը, համայնքապետարանի աշխատակիցներ, վարչական ղեկավարներ:

Նիստը վարում էր համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը:

Նիստն արձանագրում էր Ազգանուշ Ֆրանգյանը:

Նիստն անցկացվում էր առցանց հեռարձակմամբ:

Համայնքի ղեկավար Քաջայր Նիկողոսյանը ներկայացրեց Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 20-ի նիստի օրակարգի նախագիծը:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանու 2024 թվականի փետրվարի 20-ի արտահերթ նիստի օրակարգը.

1) Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման և 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունները հաստատելու մասին

/զեկուցող՝ Վ.Ապրեսյան/

2)Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի սեփականություն հանդիսացող բնակարանները նվիրատվությամբ փոխանցելուն համաձայնություն տալու մասին

/զեկուցող՝ Ա. Մաթոսյան/

3)Սպիտակ համայնքում գործող մանկապարտեզներ հաճախող երեխաների մանկապարտեզի վարձավճարի արտոնություն տալու մասին

/Զեկուցող՝ Ա. Ֆրանգյան/

Օրակարգը դրվեց քվեարկության և անցավ միաձայն:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (15) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

Օրակարգի քվեարկությունից հետո ավագանու անդամ Սարգիս Փիլոյանը եկավ նիստերի դահլիճ:

1.ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԵՎ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԼԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա.ՖՐԱՆԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին և 5-րդ կետերով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 8-րդ մասով՝ Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1.Հաստատել Սպիտակ համայնքի 2023 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

2. Հաստատել Սպիտակ համայնքի 2023 թվականի տարեկան աշխատանքային պլանի իրականացման վերաբերյալ տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Հարցը դրվեց քվեարկության և անցավ միաձայն:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (16) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

2.ԼՍԵՑԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅԱՄԲ ՓՈԽԱՆՑԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՑՈՂ՝ Ա.ՄԱԹՈՍՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի մարտի 6-ի թիվ 303-Ն որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Համաձայնություն տալ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքին սեփականության իրավունքով պատկանող բնակարանները քաղաքացիներին նվիրատվությամբ փոխանցելուն՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ Սպիտակ համայնքի և քաղաքացիների միջև կնքվող նվիրատվության պայմանագրերի նոտարական վավերացման և դրանցից ծագող իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարումները կատարվում են քաղաքացիների միջոցների հաշվին:

Հարցը դրվեց քվեարկության և անցավ միաձայն:

Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (16) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

3.ԼՍԵՑԻՆ «ՍՊԻՏԱԿ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐ ՀԱՃԱԽՈՂ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՐՑԸ

(ԶԵԿՈՒՅՈՂ՝ Ա.ՖՐԱՆԳՅԱՆ)

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սպիտակ համայնքի ավագանին ***որոշում է.***

1. Սպիտակ համայնքում գործող մանկապարտեզների՝ զինծառայող ծնողի, ռազմական գործողություններին մասնակցած ծնողի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ընթացքում կամ հակառակորդի նախահարձակ գործողության հետևանքով զոհված (մահացած) կամ Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ հակառակորդի հետ շփման գծում մարտական հերթապահության կամ հատուկ առաջադրանք կամ ծառայողական պարտականություններ կատարելու ժամանակ անհայտ կորելու հետևանքով դատական կարգով անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված զինծառայողի երեխաներին մանկապարտեզի վարձավճարը վճարելու համար տալ արտոնություն՝ ազատել նրանց սահմանված վճարի վճարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2024 թվականի մարտի 1-ից:

Հարցը դրվեց քվեարկության:
Քվեարկության արդյունքները - ԿՈՂՄ (16) ԴԵՄ (0) ՁԵՌՆՊԱՀ (0)

ՔԱՋԱՅՐ ՆԻԿՈՂՈՍՅԱՆ
ԼՈՒՍԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՐՏԱԿ ՄԱԹՈՍՅԱՆ
ՀԱՅԿ ՍԻՍԱԿՅԱՆ
ԱԼՎԱՐԴ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ՌԱՖԱՅԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ
ԳԵՎՈՐԳ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԶԱԼԻԿՈ ՀԱՄԲԱՐՅԱՆ
ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՍԻՄՈՆՅԱՆ
ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ
ՆՈՒՆԵ ԷՀՏԻԲԱՐՅԱՆ
ՎԱՐԴՈՒՀԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ
ՍԱՐԳԻՍ ՓԻԼՈՅԱՆ
ՎԱՀԵ ՂԱՋԱՐՅԱՆ
ԱՆՆԱ ԱԼԹՈՒՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ք. ՆԻԿՈՂՈՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐԵՑ՝ Ա. ՖՐԱՆԳՅԱՆ